ՈՒՂԵՐՁ ՅՈԹԱՆԱՍՈՒՆԻ ՔՎՈՐՈՒՄԻ ԱՆԴԱՄԻ ԿՈՂՄԻՑ

«Աշխատենք նրա այգում մարդկանց հոգիների փրկության համար»

Երեց Ռեշետնիկով, Յոթանասունից

2013թ. ապրիլին Եկեղեցու գերագույն համաժողովի ժամանակ ես մի հաղորդագրություն ստացա ինչ-որ մեկից, որտեղ ասվում էր, որ եղբայր Միխայիլը մահացել է: Այդ հրաշալի մարդուն ճանաչողների համար դա մեծ անակնկալ էր: Եղբայր Միխայիլը բավականին երիտասարդ էր, առողջ տեսք և ապագայի հետ կապված մեծ ծրագրեր ուներ:… Եվ հանկարծ գալիս է այդ լուրը: Իմ առաջին միտքն էր. «Արդյոք նա պատրա՞ստ էր հանդիպելու Աստծուն: Արդյոք ես պատրա՞ստ կլինեի նրան հանդիպելու, եթե դա ինձ հետ պատահեր»:

Վերջերս Ռուսաստանի Սամարա միսիայի նախագահի հետ այցելեցինք մի եղբոր, որը մեզ ասաց. «Ես գիտեմ, որ մահանալուց հետո հանդիպելու եմ Աստծուն, և հուսով եմ ժամանակ կունենամ պատրաստվելու դրան»: Մարգարեներն ուսուցանում են մարդկանց, որ պետք է պատրաստվել հանդիպելու Աստծուն այս կյանքում և չհետաձգել՝ մեր ապաշխարությունը թողնելով վերջին օրվան. «Քանզի ահա, մարդկանց համար այս կյանքն է ժամանակը նախապատրաստվելու՝ հանդիպելու Աստծուն. այո, ահա, մարդկանց համար այս կյանքի օրն է իրենց գործերը կատարելու օրը: Եվ այժմ, ինչպես ես առաջ եմ ասել ձեզ, քանի որ դուք ունեցել եք այսքան շատ ապացույցներ, հետևաբար, ես աղերսում եմ ձեզ, որ դուք չհետաձգեք ձեր ապաշխարության օրը մինչև վերջ. քանզի կյանքի այս օրից հետո, որը տրված է մեզ՝ նախապատրաստվելու հավերժության համար, ահա, եթե մենք ճիշտ չենք օգտագործում մեր ժամանակն այս կյանքում, հետո գալիս է խավարի գիշերը, որի ժամանակ ո՛չ մի գործ չի կարող կատարվել» (Ալմա 34.32–33):

Երեց Մ. Ռասել Բալլարդը խորհուրդ է տվել. «Հիշեք, հավերժությունը ներկայում է, ոչ թե անորոշ, հեռավոր ապագայում: Մենք հավերժական կյանքին պատրաստվում ենք ամեն օր՝ հենց հիմա: Եթե մենք չենք պատրաստվում հավերժական կյանքի համար, ապա պատրաստվում ենք այլ, գուցե ինչ-որ ավելի քիչ բանի համար»:

Ուրեմն, ի՞նչ պետք է անենք, որպեսզի պատրաստվենք հանդիպելու Աստծուն: Ամենակարևորը, մենք պետք է հնազանդ լինենք մեր Երկնային Հորը: Մեր ապագան, մեր երջանկությունն այս և գալիք կյանքում կախված են Աստծո խոսքը լսելու և դրան ուշադրություն դարձնելու մեր ցանկությունից: Դուք և ես օրհնված ենք, որ հնարավորություն ունենք ապրելու մի ժամանակահատվածում, երբ Տերն արագացնում է իր աշխատանքը: Այս ժամանակահատվածում է, որ Փրկիչը խոսեց Ջոզեֆ Սմիթի հետ 1832թ. «Ահա, ես կարագացնեմ իմ աշխատանքն իր ժամանակին» (ՎևՈ 88.73): Այս վերջին օրերին Տերն Իր Մարգարեի՝ Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնի միջոցով, մի քանի անգամ այսպես հրահանգեց մեզ. «Այժմ է ժամանակը, որպեսզի անդամներն ու միսիոներները համատեղ տքնեն Տիրոջ այգում՝ հոգիներ բերելով Նրա մոտ: Նա պատրաստել է միջոցներ մեզ համար, որպեսզի բազմաթիվ եղանակներով կիսվենք ավետարանով: Իսկ եթե հավատքով կատարենք Իր աշխատանքը, Նա կաջակցի մեզ մեր ջանքերում» (*Լիահոնա*, նոյ. 2013, 4):

Եղբայրնե՛ր և քույրե՛ր, ի՞նչ սկզբունք է Տերը ցանկանում ուսուցանել մեզ այսօր: Ի՞նչ է ուզում, որ մենք անենք: Մենք պետք է «աշխատենք նրա այգում մարդկանց հոգիների փրկության համար» (ՎևՈ 138.56): Այժմ է ժամանակը, որ մենք՝ Իր եկեղեցու անդամներս, լիովին մասնակցենք Իր փրկության

աշխատանքին: Այժմ է ջանասիրաբար և փափագով աշխատելու ժամանակը: Այս աշխատանքը առաջ չի գնա առանց մեր մասը գործելու: Ինչպես Նախագահ Հենրի Բ. Այրինգն է ասել. «Անկախ մեր տարիքից, ունակությունից, Եկեղեցու կոչումից կամ վայրից, մենք կանչված ենք որպես մեկ աշխատելու և օգնելու Նրան Իր հոգիների բերքահավաքում» («Մենք մեկ ենք», *Լիահոնա*, մայիս 2013, 62):

Տերը չի պահանջում, որ մեր ուժերից վեր աշխատենք: Նա չի համեմատում մեր և մյուսների ջանքերը: Մեր Երկնային Հայրը խնդրում է միայն, որ աշխատենք մեր ուժերի ներածին չափով, որքան էլ շատ կամ քիչ այն լինի: Ալման հրահանգեց իր որդի Հելամանին. «Այո, և այդ ժամանակից ի վեր՝ մինչ այժմ, ես տքնել եմ առանց դադարելու, որ ես կարողանամ ապաշխարության բերել հոգիներ. որ ես կարողանամ բերել նրանց՝ ճաշակելու այն սաստիկ ուրախությունից, որից ես ճաշակեցի. որ նրանք նույնպես կարողանան ծնվել Աստծուց և լցվել Սուրբ Հոգով» (Ալմա 36.24): Ցանկացած անդամ կարող է ապրել այդ ուրախությունը՝ ավետարանով և Փրկչի ուսմունքներով կիսվելով մյուսների հետ:

Մեր մեծագույն օրհնություններից և որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ մեր պարտականություններից մեկն է՝ հասցնել ավետարանը այս երկրի վրա ապրող բոլոր մարդկանց և ընտանիքներին: Միսիոներական աշխատանքը կատարելու բազմաթիվ եղանակներ կան, որպեսզի գտնենք մարդկանց, ովքեր պատրաստ են ուսուցանվելու միսիոներների կողմից: Բանալին աշխատելու և դեպի այդ նպատակը տանող փոքր, բայց կարևոր քայլեր կատարելու մեր ցանկությունն է:

Ժամանակն է, որ մեզանից յուրաքանչյուրը որոշի իր դերն այս աշխատանքում: Մենք դառնում ենք Քրիստոսի ճշմարիտ աշակերտները, երբ կոչ ենք անում մեր սիրելիներին ընդունել ավետարանը և սեր ու հոգածություն ենք ցուցաբերում նրանց հանդեպ: Ես վկայում եմ, որ սա Աստծո աշխատանքն է, և մենք բոլորս կարող ենք լինել այս մեծ գործի մասը: ■

«Հիշողության մեջ պահել Աստծո գործերը»

Մարինա Խառլամովա, Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի նորությունների համակարգող

Մայիսի 3-ից 5-ը Արևելյան Եվրոպայի տարածաշրջանում առաջին անգամ Կիևում տեղի ունեցավ Արևելյան Եվրոպայի տարածքի միսիաների և ցցերի համակարգողների համար Եկեղեցու պատմության հարցերին առնչվող ուսուցողական սեմինար: Մասնակցում էին 17 մարդ տարբեր երկրներից և քաղաքներից, ովքեր ունեին այդ կոչումները, որոնց շարքում էին՝ Բուլղարիան, Ռուսաստանը (ներառյալ՝ Եկատերինբուրգը, Մոսկվան, Նովոսիբիրսկը, Սամարան), Ուկրաինան (ներառյալ՝ Կիևը, Դնեպրոպետրովսը, Խարկովը): Լատվիայի համակարգողը ներկայացնում էր բոլոր մերձբալթյան երկրները: Սեմինարը նախապատրաստվեց և անցկացվեց Սերգեյ և Նատալիա Սավելևների կողմից, ովքեր հանդիսանում են Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի պատմության հարցերով համակարգողներ: Սեմինարին մասնակցեցին նաև Երեց և Քույր Ջոնսոնները՝ տարածքային նախագահությունից, Մեթ Հայսը՝ Եկեղեցու Պատմության միջազգային աջակցության և ձեռքբերումների բաժնից, և Սքոթ Քրիսթենսենը՝ Արխիվարիուսը, Եկեղեցու Պատմության հավաքածուների հավաքման բաժնից:

Սեմինարի երկօրյա ծրագիրը խիստ հագեցված էր: Մասնակիցների ծանոթանալուց հետո Սեգեյ Սավելևը պատմեց Եկեղեցում պատմաբանի կոչման կարևորության մասին. «Այն ունի լուրջ հոգևոր հիմք, որովհետև Եկեղեցու ստեղծման հենց առաջին օրը՝ 1830թ. ապրիլի 6-ին Տերն ասաց Մարգարեին, որ « մի հիշատակարան պիտի պահվի ձեր մեջ» (ՎԿՈՒ 21.1): Ուստի կատարելով այս հանձնարարությունը, Եկեղեցու երրորդ կոչումը վերականգնման պահից սկսած դարձավ եկեղեցական պատմաբանի կոչումը: Աստված ուզում է, որ մենք և մեր հետնորդները կարողանանք տեսնել մեր կյանքում հավատքի դրսևորումը, իմանանք մեր դժվարությունների մասին և թե ինչպես մենք սովորեցինք հաղթահարել դրանք, ինչպես կառուցեցինք Եկեղեցին առաջին տարիներին և հետագայում: Երիտասարդ սերունդը Եկեղեցում համարում է Կիևում տաճարի բացումը մի երևույթ, որն ինքըստինքյան պետք է տեղի ունենար: Սակայն նրանց համար, ովքեր կառուցեցին այն, սկզբում՝ հավատքի, իսկ այնուհետև՝ նյութական մակարդակով, դա իրենց հավատքի, զոհաբերության, վկայության, ծառայության պտուղն էր: Եվ եկեղեցական պատմության նպատակն է օգնել մեզ և հետագա սերունդներին տեսնել Աստծո գործերը մեր կյանքում:

Սեմինարի հիմնական խնդիրն էր Եկեղեցու պատմաբանների ուսուցանումը

Սեմինարի մասնակիցները

երեք ուղղություններով՝ ամենամյա ժամանակագրության կազմումը, հարցազրույցների անցկացումը և հիշարժան տարեթվերի տոնակատարությունների և հանդիսությունների կազմակերպման համար փորձի փոխանակումը:

Սկզբում Երեց և Քույր Նոյնչվանդերների, իսկ այնուհետև Սերգեյ և Նատալյա Սավելևների կողմից այս տարածքում տարբեր միսաներում մի շարք սեմինարներից հետո, ամենամյա ժամանակագրությունը գրելը տարբեր եկեղեցական բաժինների համար դադարեց մշուշոտ հեռանկար լինել: Հետաքրքիր է այն փաստը, որ նրանք, ովքեր գրել են այդպիսի ժամանակագրություն ամենայն ջանասիրությամբ, հետագայում տեսան մեծ օրհնություններ դրանում: Պարզվում է հավաքված տեղեկությունները ոչ թե պարզապես չոր հաշվետվություն են, այլ անսովոր հուզական և հոգևոր: Թերթեք այդպիսի ժամանակագրության թերթերը և դուք ինքներդ կհամոզվեք դրանում: Բացի ծխի, շրջանի, միսիայի և ցցի կյանքի պատմության մեջ հետքրքիր ուղևորությունից, այն դառնում է յուրահատուկ աստիճանասանդուղք, որի վրա բարձրանալով, կարելի է տեսնել ոչ միայն անցյալը, այլ նաև հեռանկարները: «Նույնիսկ կարևոր իրադարձությունները հեշտորեն հեռանում են մեր հիշողությունից, - ասաց Ելենա Գուլյաևան, որը 2011 թվականին առաջին անգամ հավաքեց հիանալի նյութ՝ ռուսական Մոսկովյան ցցի ամենամյա ժամանակագրության համար, - ուստի կարևոր է պահպանել այդ տեղեկությունը և փոխանցել այն հետագա սերունդներին»:

Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի Նախագահության առաջին խորհրդական Ռենդալ Բեննեթը՝ դիմելով սեմինարի մասնակիցներին, արտահայտեց այն միտքը, որը տպավորվեց շատերի հիշողության մեջ. «Թանկագին Մարգարիտ» գրքում Աբրահամը նկարագրում է իր անձնական պատմությունը, որում մենք գտնում ենք շատ արժեքավոր ուսմունքներ: Այն ամենը, ինչ գրված է նրա կողմից, դարձավ Եկեղեցու պատմության մի մասը: Մյուս օրինակը Ղուկասն է: Ժամանակի մեծ մասը նա անցկացնում էր Պողոսի հետ: Ղուկասը եկեղեցու հիանալի պատմաբան է: Ուշադրություն դարձրեք. բոլոր սուրբ գրությունները, որոնք մենք այժմ օգտագործում ենք, դա եկեղեցական պատմությունն է: Ուստի հիշեք, որ Տերը որոշակի պահի կօգտագործի այն, ինչ դուք գրում եք այժմ՝ Իր բարձր նպատակների համար, ինչպես որ Նա այդ արել է Աբրահամի, Ղուկասի, մյուսների աշխատությունների հետ: Կատարեք ձեր գրառումները և մի մոռացեք, որ դուք կատարում եք շատ կարևոր աշխատանք: Տեխնիկական նոր միջոցները ձեզ ավելի լավ են օգնում, քան Աբրահամի ժամանակներում եղած միջոցները:

Իսկապես, սեմինարի ժամանակ մասնակիցները ստացան նոր ժամանակակից դիկտաֆոններ, սովորեցին դրանք օգտագործել և այժմ այսպես կոչվող բանավոր պատմությունը, որը կազմված է Եկեղեցու անդամների հետ հարցազրույցներից, կարող է համալրվել առանձնահատուկ ձայնային էջերով:

Մեր օրերում մենք հաճախ նեղսրտվում ենք ժամանակի սակավության և արագընթացության պատճառով: Թվում է, մեր Եկեղեցին դեռ երիտասարդ է, սակայն շատ տարածաշրջաններ արդեն նշել են առաջին հոբելյանները՝ ծխի կազմավորման15-ամյակը, միսիայի կազմավորման 20-ամյակը: Այն ժամանակ, առաջին տարիներին մեզ մոտ, գրեթե, ոչ մի տեղ չկային կանչված պատմաբաններ, բայց Եկեղեցու անդամները սրտի թելադրանքով և հոգու զգայունության շնորհիվ, միևնույն է, արել են այդ աշխատանքը:

Եվ նրանցից են Վելգա Սենկանեն (Լատվիա) և Նատալիա Սիվակոնը (Խարկով):

Վելգան, գրեթե, հենց սկզբից, ինչ Եկեղեցի եկավ, սկսեց գրառումներ կատարել, սիրողական տեսաֆիլմեր նկարահանել և լուսանկարել: Եվ, ահա, Եկեղեցին Լատվիայում նշում է իր 20-ամյակը: Հանդիսավոր իրադարձությունը կազմակերպող կոմիտեն որոշում է օգտագործել նկարահանված նյութերը և դրանից ֆիլմ ստեղծել: Եվ մեկուկես տարի անց դա տեղի ունեցավ (հղում կայքին): Բոլորը, ովքեր տեսել են այն, չկարողացան անտարբեր մնալ՝ այնքան բարի և լուսավոր հիշողություններ այն արթնացրեց:

Իսկ Նատալիա Սիվոկոնը բաժանվելով իր առաջին միսիոներներից, չկամեցավ մոռանալ այն երախտագիտությունը, որն ուներ նրանց հանդեպ իր սրտում: Նա երկար տարիներ նրանց հետ կապ էր պահպանում, և ոչ միայն: Նա գտավ բոլոր առաջին միսիոներներին, ովքեր ծառայել էին Խարկովում, հավաքեց նրանց լուսանկարները, ձայնագրեց նրանց հետ մի հարցազրույց, իսկ հետո կազմակերպեց նրանց և մյուս միսիոներների հետ տեսակամուրջներ (սքայփով), ինչը բոլոր մասնակիցների կողմից հիշվեց իր ջերմ ընկերական հաղորդակցության և սրտերի միավորման շնորհիվ:

2007 թվականին Հենրի Բ. Այրինգն՝ ելույթ ունենալով գերագույն համաժողովին, ասաց. «Աստծուն մոռանալը աշխարհի սկզբից ի վեր եղել է Իր ժողովրդի հիմնական խնդիրը», ուստի կարևոր է, որպեսզի մենք «չմոռանանք այն գործերը, որոնք տեսել են մեր աչքերը, և որ դրանք դուրս չգան մեր սրտերից մեր կյանքի բոլոր օրերում»: Եվ դա հաջողվում է անել այն տարածքներում, որտեղ քահանայության ղեկավարները հասկանում են Եկեղեցու պատմությունը ջանասիրաբար և շարունակաբար գրելու անհրաժեշտությունը, և աջակցում են կանչված եղբայրներին և քույրերին ոչ միայն խոսքով, այլ գործով:

Աննա Սիրովան՝ Ռուսաստանի Սամարայի միսիայից, հաջողությամբ կատարում է միսիայում պատմաբանի կոչումը արդեն յոթ տարի շարունակ և դրանում նա տեսնում է միսիայի, շրջանների, ծխերի ղեկավարության հետ սերտ համագործակցության պտուղները: «Ես զգում եմ նրանց աջակցությունը, տեսնելով նրանց կողմից ամենամյա ժամանակագրության արձանագրման կարևորության ըմբռնումը, կանոնավոր շփման կազմակերպման կարևորությունը՝ այն եղբայրների և քույրերի հետ, ովքեր դա անում են: Ես հնարավորություն ունեմ պարբերաբար ուսուցումներ անցկացնելու կանչված պատմաբանների և նրանց հետ, ովքեր ղեկավարում են այդ աշխատանքը քահանայության գծով: Դեռ ամեն ինչ չէ, որ արված է, չէ՞ որ մենք աստիճանաբար ենք ուսուցանվում, բայց այն, որ տարեց տարի մեր միսիայի մեծ և փոքր ծխերի «պահեստանոցները» համալրվում են Եկեղեցու պատմության մասին մեր հիշողություններով, ինձ վստահություն է ներշնչում նրա հանդեպ, որ մենք և մեր ապագա սերունդները կստանանք մեր հրաշալի օրհնությունները»:

Անցած տարի Հայաստանում ստեղծվեց ցից, որը չորրորդը դարձավ Արևելյան Եվրոպայի տարածաշրջանում: Երևան, Հայաստան ցցի պատմաբան կանչվեց Հասվիրա Մինասարյանը: Նա նույնպիսի ուսուցում ստացավ ամենամյա տարեգրություն կազմելու և բանավոր հարցազրույցներ անցկացնելու վերաբերյալ, ինչպես նույն կոչումով նրա աշատակիցները Կիևի սեմինարում: Նրա հետ միասին ուսուցանվեց նաև ցցի ղեկավարությունը: Այժմ Հասվիրայի խնդիրն է՝ ուսուցանել ծխերի պատմաբաններին կազմել ամենամյա տարեգրություն, վերցնել հարցազրույցներ Եկեղեցու անդամներից, և ինքնուրույն կազմել ցցի տարեգրությունը: ■

Ընտանեկան պատմության համաժողով Ուկրաինայի Կիևի Ցցում

Վյաչիսլավ Վորոբյով, Ուկրաինայի Կիևի Ցցի բարձրագույն խորհրդի անդամ

«Սա առանձնահատուկ համաժողով է», - այս խոսքերով բացեց ընտանեկան պատմության համաժողովը Ուկրաինայի Կիևի ցցի Նախագահ Կիրիլ Պոխիլկոն, որը տեղի ունեցավ 2013թ. սեպտեմբերի 7-ին Կիևի Պեչերյան ծխի շենքում: «Մենք ուրախ ենք այն հնարավորության համար, - շարունակեց նա, - որ մենք կուսուցանվենք հրաշալի եղբայրների և քույրերի կողմից, ովքեր հանդիսանում են ընտանեկան պատմության լավ մասնագետներ

Համաժողովի մասնակիցների խումբը Հայաստանից

և կարող են հաղորդել մեզ շատ կարևոր և օգտակար տեղեկություններ: Եվ եթե մենք կամենանք դրանք ընդունել, ապա սկսած այս օրվանից,այն կարող է դառնալ մեր կյանքի մի մասը, և մեր ծառայության մեջ մեր ծխերում ամեն ինչ կարող է դառնալ այլ կերպ»:

Միջոցառման ծրագրում ընդգրկված էին ուսուցողական երկու նիստ և հարց ու պատասխանի նիստ թեմատիկ հարցերով ընտանեկան պատմության խորհրդատուների, կենտրոնների տնօրենների և ծխերի խորհուրդների անդամների համար: Վերջին՝ երրորդ ուսուցողական նիստին հրավիրված էին բոլոր ցանկացողները: Եվ չնայած համաժողովը կազմակերպվել էր Ուկրաինայի Կիևի ցցի կողմից, դրան մասնակցում էին եղբայրներ և քույրեր Արևելյան Եվրոպայի տարածքի տարբեր անկյուններից, ովքեր կոչումներ ունեին ընտանեկան պատմության գծով Լվովից, Դնեպրոպետրովսկից և Դոնեցկի միսիայից և նաև մի խումբ երիտասարդներ Հայաստանի Երևան ցցից:

Ուսուցումն անցկացվեց Արևելյան Եվրոպայի տարածաշրջանի տարբեր մասերի տարածքային ընտանեկան պատմության խորրդականների, ինչպես նաև Ընտանեկան Պատմության Բաժնի աշխատողների կողմից:

Համաժողովի հիմնական նպատակն էր օգնել ծխերի ընտանեկան պատմության խորհրդատուներին տեսնել և զգալ, թե որքան ծանրակշիռ ներդրում կարող են իրենք կատարել Տիրոջ փրկության աշխատանքում ՝ օգնելով ընտանիքների հետ անձնական հանդիպումների ընթացքում նրանց համար բաց անել իրենց իսկ պատմությունը: Լինելով լավ ուսուցիչներ և անկեղծորեն ցանկանալով օրհնել ուրիշների կյանքը, ոգեշնչված խորհրդատուները բերում են ծխի անդամներին գիտակցության փոփոխություն, որը մենք հաճախ անվանում ենք «սրտի փոփոխություն:» «Ես հավատում եմ, որ ընտանեկան պատմությունն այն է, ինչ կարող է օգնել փոխել մեր սրտերը:… Ի՞նչ է կատարվում մեզ հետ, երբ մեզ մոտ առաջանում է առաջնային հետաքրքրություն մեր ընտանեկան պատմության հանդեպ:… Մենք սկսում ենք զգալ Հոգին:… Կատարելով փոքր քայլեր, մենք սկսում ենք ավելի առատորեն զգալ Հոգին: Ի՞նչ է կատարվում մեր սրտի հետ: Այն սկսվում է փոխվել: Հենց որ մենք արխիվ ենք գնում, իսկ հետո գնում այն մարդկանց մոտ, ովքեր մեզանից շատ ավելի մեծ են և ավելի շատ բան սկսում իմանալ մեր ընտանեկան պատմության մասին, ի՞նչ է կատարվում մեզ հետ: Մեր սրտերը շարունակում են փոխվել», - ասաց Նախագահ Պոխիլկոն:

Գլխավոր շեշտադրումներից մեկը ուսուցման ժամանակ վերաբերվում էր «ծագումնաբանություն» և «ընտանեկան պատմություն» հասկացությունների տարբերությանը: «Ինձ հաջողվեց հաջողության հասնել իմ ծագումնաբանական հետազոտություններում, - իր փորձով կիսվեց Բենգտ Սվեթջոթը՝ Եվրոպական երկրների տարածաշրջանային ղեկավարը: - Տոհմածառի մի քանի տոհմագծերում ես հասա մինչև 12-րդ սերունդ: Խոսքը գնում է ծագումնաբանական հետազոտություններին՝ ամսաթվերին և ծննդավայրերին, ամուսնություններին և մահվանը և այլն: Բայց սա չէր, որ ինձ ներգրավեց ընտանեկան պատմության մեջ՝ ինձ հետաքրքրում են ամեն ձևի պատմություններ մարդկանց մասին, ովքեր աշխարհ են եկել նախքան իմ ծնվելը: Իմ նախնիների պատմությունները շատ մոտ են իմ սրտին»:

Ալեքսանդր Միչկարենկոն՝ ընտանեկան պատմության գծով ծրագրերի և նախագծերի ղեկավարը Արևելյան Եվրոպայում, ավելացրեց. «Երբ մենք խոսում ենք ծագումնաբանության մասին և ցույց ենք տալիս ինչ որ մեկին մեր նախնիների շատ սերունդներ, որոնք մենք

հավաքել ենք, դա միայն արտաքին գործոն է: Իսկ ի՞նչ է կատարվում մեր սրտերում: Արդյոք մենք զգացե՞լ ենք սեր: Արդյոք մենք զգացե՞լ ենք աստվածային ներգործություն մեր կյանքում, երբ զբաղվում էինք մեր նախնիների մասին պատմությունը հավաքելով, երբ ինչ որ բան էինք անում նրանց համար: Ներքին և արտաքին գործոնները պետք է համընկնեն»: Ուսումնասիրելով մեր նախահայրերի կյանքը և նրանց ժողովրդի պատմությունը, Հոգու ազդեցության միջոցով մենք իմանում ենք ինչ որ կարևոր մի բան նաև մեր և մեր ընտանիքի մասին և նույն Հոգու ազդեցությամբ, որը հաճախ կոչվում է «Եղիայի Հոգի», մեր սրտերում առաջանում է սեր նրանց հանդեպ և հույս այն բանի վերաբերյալ, որ մենք կարող ենք հավերժ միասին լինել:

Համաժողովի մյուս կարևոր մասն էր ընտանեկան պատմության ցուցադրումը որպես փրկության աշխատանքի տարբեր նպատակներին հասնելու միջոց: Վերջին գերագույն համաժողովների ժամանակ Եկեղեցու ղեկավարությունը իրենց ելույթներում խոսում էր այն մասին, թե որքանով էր երիտասարդությունը պատրաստված ծառայելու՝ զբաղվելով ընտանեկան պատմության աշխատանքով և որքանով ուժեղ պաշտպանություն կարող է լինել նրանց համար այդպիսի ծառայությունը: Մարգիս Այվազյանը՝ տարածաջրջանի ընտանեկան պատմության խորհրդատուն Հայաստան Երևան միսիայից, նույնպես խոսելով երիտասարդության մասին ավելացրեց. «Մենք գիտենք, որ ընտանեկան պատմության գործում մենք պետք է խորը «փորենք» դեպի անցյալը, որպեսզի ինչ որ բան գտնենք: Բայց սիրելի եղբայրներ և քույրեր, աշխատեք խորը թափանցել երիտասարդ մարդկանց սրտերը, աշխատեք հասկանալ, թե ինչ կա նրանց հոգում: Եթե մենք սկսենք օգնել երիտասարդներին, Տիրոջ գալուստն ավելի արագ տեղի կունենա»: Կարևոր է նշել, որ ոչ վաղուց կանչված ցցի խորհրդատուները պատանիներ են ու աղջիկներ մինչև 18 տարեկանը: Նշելով այս փաստը, ցցի նախագահն ավելացրեց. «Այս օրվանից Սվյատոշինյան ծուխը տասներեք հիանալի խորհրդատուների է կանչել՝ երիտասարդ տղամարդկանց և երիտասարդ կանանց, մեծահասակ եղբայրների և քույրերի: Եթե նրանք աշխատեն համագործակցելով, ապա Տերը կօրհնի ողջ ծուխը, ծխի ընտանիքներին և հենց խորհրդատուներին»:

Ընտանեկան պատմությունը կարող է լինել հիանալի միջոց նաև մեր հավատալիքներով կիսվելու համար: Ալեքսանդր Միչկարենկոն պատմեց իր նախնիների և իր սեփական ընտանիքի կյանքից մի քանի դեպք, երբ աստվածային միջամտությունը փրկել է տառապանքներից և բերել հանգստություն: Այդ հետաքրքիր պատմությունները ունկնդիրների համար աննկատորեն ստեղծեցին մի մթնոլորտ և առիթ, երբ պատմողը կարողացավ կիսվել ավետարանական սկզբունքների հանդեպ հավատքով: «Երբ ես կիսվում եմ ավետարանով պարտադիր չէ անմիջապես փաստեր բերել, - ասաց նա: - Կարևորն այն է, որ մարդը զգա Հոգու ազդեցությունը, ինչպես դուք զգացիք դա այժմ, և որպեսզի մարդը լսի մեզանից գնահատական ավետարանական ինչ որ սկզբունքների մասին, որոնք կարող են կյանքում նրան պետք գալ»:.

Ուուցողական նյութը ներկայացնող սլայդներից մեկը մեջբերում էր անում սրտերը դարձի բերելու ձեռնարկից. «Ընտանեկան պատմությունը թույլ է տալիս Եկեղեցու անդամներին կիսվել ավետարանական ուղերձներով հանգիստ իրավիճակում: Մարդկանց մեծ մասն անկեղծորեն հետաքրքրվում է ընտանիքին առնչվող հարցերով: Աշխարհում միլիոնավոր մարդկանց սրտեր դարձի են եկել դեպի իրենց նախնիները:» Եղբայր Ալեքսանդրը մեջբերեց նաև Երեց Քրիստոֆեր Բիգալոյի խոսքերը. «Շատերը կարծում են կրոնը շատ սրբազան հարց է և չեն կամենում կիսվել դրանով ուրիշների հետ: Մյուս կողմից յուրաքանչյուր մարդ պատրաստ է խոսել իր նախնիների մասին:… Շատ դժվար է Եկեղեցու անդամներին ներգրավել միսիոներական աշխատանքի մեջ: Մենք փորձել ենք տարբեր միջոցներ, բայց երբ օգտագործում ենք ընտանեկան պատմության մոտեցումը, ավելի շատ անդամներ են արձագանքում մեր կոչին» (2000թ. գերագույն համաժողով):

Համաժողովի մյուս թեմաների շարքում էին՝ մեր ժառանգությունը (օրագրեր, լուսանկարներ և անձնական իրեր), ընտանիքների պատմությունը հասկանալը պետության պատմության ենթատեքստում, ծագումնաբանական հետազոտությունների հիմունքները, ինչպես նաև բազմաթիվ միջոցներ և ռեսուրսներ, որոնք մատչելի են, ինչպես ընտանիքներին՝

իրենց պատմությունը կազմելու համար, այնպես էլ՝ խորհրդատուներին՝ ուրիշ մարդկանց օգնելու համար:

Եզրափակելով՝ ցցի նախագահն ասաց. «Օրը շատ մեծ ոգեշնչմամբ անցավ: Ինձ համար այն առանձնահատուկ էր: Այստեղ մեզ հետ այսօր ավելի քան 100 մարդ կար: Մեզ ուսուցանեցին, թե ինչպես պրակտիկ ձևով Տիրոջ խոստումը, որը տրվել էր Մաղաքիա մարգարեի միջոցով, կարող է իրականանալ մահացած մարդկանց համար՝ մեր հարազատների, ովքեր երբեք չեն իմացել Հիսուս Քրիստոսի ավետարանի մասին, բայց նրանց խոստում էր տրված, որ նրանց երեխաների սրտերը կդարձվեն դեպի իրենց: Երկնային Հայրը սիրում է մեզ, և Նա մեզ հնարավորություն է տվել դեպի ավելի լավը փոխվելու այս կյանքի ընթացքում: Ընտանեկան պատմությունը հնարավորություն է դեպի լավը փոխվելու և դա միանգամյա գործողություն չէ. դա գործընթաց է»: ■

ՏԵՂԱԿԱՆ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երիտասարդ ամուրիների համաժողով

Լիանա Մուրադյան, Երևան Հայաստան Ցից, Գյումրի ճյուղ

Ես որոշեցի մասնակցել 2013 թվականի կազմակերպված երիտասարդ ամուրիների համաժողովին, որը տեղի ունեցավ օգոստոսի 28-ից 31-ը Ծաղկաձոր Մարիոթ հյուրանոցում: Այն շատ հետաքրքիր էր կազմակերպված: Յուրաքաչյուր օրը ուներ իր խորհուրդը: Նախ մենք բաժանվել էինք խմբերի, որոնք մենք կոչում էինք ընտանիքներ: Մեզ տրվել էին սուրբ գրություններից հատվածներ, որոնք մենք քննարկելու էինք մեր ընտանիքների հետ առավոտյան ժամերին, իսկ երեկոյան մեզ սպասվում էին ընտանեկան երեկոներ, յուրաքանչյուր երեկո իր հոգևոր մտքով, որը մեկը մյուսից հետաքրքիր և խորիմաստ էր: Ինձ շատ դուր եկավ այն մասը, երբ մեզ հանձնարարվեց մեր անունները գրել մի մեծ թղթի վրա, որը նման էր տերևի: Սկզբում մենք գրեցինք մեր «ծնողների» անունները, մի քիչ նրանց մասին, իսկ հետո գրեցինք մեր անունները և մի փոքր կենսագրությունից: Այն գեղեցիկ գույներով ձևավորեցինք: Համաժողովի վերջին երեկոյի ժամանակ մենք փակցրեցինք դրանք նկարված ծառի վրա: Երբ յուրաքանչյուր խումբ կատարեց այդ նույն գործողությունը՝ ծառը ասես կենդանացավ: Այն խորը իմաստ ուներ: Ես նկատեցի, որ ծառի բնի վրա գրված էր մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի անունը: Ինչպես ընտանիքի հիմքը պետք է լինի Հիսուս Քրիստոսը, այնպես էլ մեր համաժողովի խմբերի՝ ընտանիքների հիմքը Հիսուս Քրիստոսի վարդապետությունն էր: Ինձ համար այն շատ խորիմաստ էր: Որտեղ էլ որ մենք լինենք, ինչպիսին էլ լինենք, մենք ամուր շղթաներով կապված ենք ոչ միայն մեր ծնողների, այլ նաև մեր նախնիների հետ: Տոհմածառը, որը մենք կառուցել էինք համաժողովին, մեզ հիշեցնում էր տաճարային աշխատանքների

Լիանա Մուրադյան

Ընտանեկան պատմության միջոցառում

մասին: Իմ հայրապետական օրհնության մեջ ասվում է նախնիների և նրանց համար կատարվելիք տաճարային աշխատանքի մասին: Ես գիտեմ, որ կատարելով այդ հրաշալի աշխատանքը, մենք կգտնենք երջանկություն ոչ միայն այստեղ՝ Երկրի վրա, այլ նաև երկնքում մեր նախնիների հետ: Ես հավատում եմ, որ շնորհիվ մեր Փրկչի կատարած Քավությանը մենք ունենք փրկության ծրագիրը, որը, այլ խոսքերով, կոչվում է Երջանկության ծրագիր: Ես գիտեմ, որ մենք ունենք վերականգնված Ավետարանը երկրի վրա: Գիտեմ, որ ունենք մարգարե, որը ստանում է հայտնություններ մեզ համար: ■

ՏԵՂԱԿԱՆ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ՁԱՅՆԵՐԸ

Ես զգում էի իմ սիրելի նախնիների ներկայությունը և ուրախությունը:

Լիանա Խումարյան, Երևան Հայաստան ցից, Երևան Ծուխ

«Ահա, ես ձեզ կհայտնեմ Քահանայությունը, Եղիա մարգարեի ձեռքով, նախքան Տիրոջ մեծ և ահեղ օրվա գալը: . . . Եվ նա զավակների սրտերում կսերմանի հայրերին տված խոստումները, և զավակների սրտերը կդառնան դեպի իրենց հայրերը: Եթե այդպես չլինի, ողջ երկիրն ամբողջովին կամայանա նրա գալստյան ժամանակ» (Ջոզեֆ Սմիթ - Պատմություն, 38-39):

Լիանա Խումարյան

Վերջին երեք տարիների ընթացքում ես շատ հաճախ լսում էի Եկեղեցու ղեկավարության հորդորներն ու ուսմունքներն ընտանեկան պատմության կարևոր աշխատանքը կատարելու մասին: Այդ ժամանակից ի վեր ինձ մոտ առաջացավ հետաքրքրություն ուսումնասիրելու և ճանաչելու իմ նախնիներին, իմանալու իմ ընտանիքի ծագումնաբանությունը: Բայց այդ ցանկությունն այդքան մեծ չէր իմ մեջ, մինչև ես լիովին չհասկացա դրա կարևորությունը փրկության ծրագրում: Երբ ութ ամիս առաջ ես կորցրեցի իմ սիրելի տատիկին, ով ուներ հավատք առ Հիսուս Քրիստոսը և մկրտվելու ցանկություն, ես սկսեցի ավելի շատ խորհել այս աշխատանքի մասին: Տատիկս չհասցրեց մկրտվել: Մի՞թե էլ չեմ տեսնելու նրան: Իհարկե կտեսնեմ, քանզի մեր սիրառատ Երկնային Հայրը պատրաստել է բազում ուղիներ, որպեսզի Իր զավակներն ունենան փրկություն և գան Իր մոտ: Այս պատճառով Նա պատվիրել է կառուցել տաճարներ և ընտանեկան պատմության կենտրոններ: Ես սկսեցի ավելի լրջորեն զբաղվել ընտանեկան պատմությամբ: Տերը պատասխանում էր իմ բոլոր աղոթքներին: Նրա օգնությամբ իմ փնտրտուքները մեծ արդյունք էին տալիս: Ես կարողացա ձեռք բերել իմ նախնիների նամակները, կտակագրերը, ընտանեկան մի ծառ՝ կազմված իմ նախնիների կողմից և «Աշխարհով մեկ» հուշագրությունը՝ գրված Հայկ և Էմմա Արծիվների կողմից, որը տալիս է բավականաչափ տեղեկություն իմ նախնիների մասին, ովքեր ապրել են 1900-ական թվականներին: Այս գրքի հին թերթերը թերթելիս, հպվելիս այս հարյուրամյա նամակներին՝ իմ սիրտն այրվում էր, և աչքերիցս հոսում էին արցունքները: Ես զգում էի իմ սիրելի նախնիների ներկայությունը և ուրախությունը, այն հույսը, որը նրանք փայփայում էին խավարից դուրս գալու համար: Ես զգացի, որ իմ սիրտը դարձել է դեպի իմ նախնիները, և նրանց տված խոստումներն իմ սրտում սկսում էին ծիլեր արձակել:

Սա դեռ սկիզբն է: Ավելի շատ աշխատանք կա կատարելու ապագայում: Իմ հաջորդ քայլերից մեկը, որ պատրաստվում եմ կատարել մոտակա ժամանակում, նախնիներից յուրաքանչյուրի կարճ կենսագրությունն ու նկարը տեղադրելն է, որպեսզի իմ ապագա սերունդներն իմանան իրենց նախնիների մասին, իսկ այդ գիտելիքը կօրհնի նրանց, ինչպես որ օրհնել է ինձ: Կատարելով այս աշխատանքը այս մի քանի ամիսների ընթացքում՝ մեծ փոփոխություն եմ զգացել իմ ներսում: Ես ինձ զգում եմ մի շատ կարևոր և մեծ բանի մի մասնիկը: Ես սա համարում եմ իմ պարտականությունն ու օրհնությունը: Ես վկայում եմ, որ առանց մեզ մեր նախնիները չեն կարող կատարյալ դառնալ, և ոչ էլ մենք կարող ենք կատարյալ դառնալ առանց մեր մահացած հարազատների: ■

ARMENIAN